Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Պ-265[1]-29.05.2013,14.06.2013-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-258 օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ երկրապահ կամավորականները» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Երկրապահ կամավորականի կարգավիճակի մասին» եւ «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում լրացելու կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էլինար Վարդանյան	«Երկրապահ կամավորականի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությունը և 6-րդ մասը համապատասխանեցնել 2-րդ մասին՝ կապված պետական կառավարման լիազորված մարմնի և միջգերատեսչական հանձնաժողովի հետ:	Ընդունվել է:	Ընդունման արդյունքում «Երկրապահ կամավորականի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝ «Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն չի տրվում, եթե՝», իսկ 6-րդ մասի «պետական կառավարման լիազորված մարմնի» բառերը փոխարինվել են «միջգերատեսչական հանձնաժողովի» բառերով: Այդ կերպ վերացվել է տեղ գտած հակասությունները:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ՝ Հովիկ Աբրահամյան, Հերմինե Նաղդալյան, Արփինե Հովհաննիսյան, Արծվիկ Մնասյան, Գագիկ Ձհանգիրյան	«Երկրապահ կամավորականի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում ամրագրել երկրապահ կամավորականի կարգավիճակի տրման կարգի և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանելու ժամկետը:	Ընդունվել է	Ընդունման արդյունքում «Երկրապահ կամավորականի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը լրացվել է նոր 6-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 6. Անցումային դրույթներ Երկրապահ կամավորականի կարգավիճակի տրման կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:»: